ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ««Խճանկար» համագործակցային մեթոդի ազդեցությունը սովորողների ուսումնառության առաջընթացի վրա»:

Հետազոտող ուսուցիչ՝ Հովհաննես Հակոբյան

Արմավիրի մարզի<<Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց >>

Մենթոր ուսուցիչ՝Աղաջանյան Ռուզաննա

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Արմավիր 2022թ

Բովանդակություն

1. Նախաբան---------- ---------3էջ
2. Գրականության ակնարկ------- ---------5էջ
3. Գործնական համատեքստ---- ---------9էջ
4. Եզրակացություն---------- --------1 3էջ
5. Գրականության ցանկ ---------- --------14էջ

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

1. Նախաբան

Տվեք երեխային հետաքրքրասիրություն:

Գիտելիքը նա կգտնի ինքը:

ԱՆԱՏՈԼԻ ԳԻՆ

Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիությունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Ունենալով տարաբնույթ առանձնահատկություն, այն աշակերտների մոտ առաջացնում է սովորածը մտապահելու, վերհիշելու դժվարություն:

Սովորողներից հաճախ ենք լսում, որ սովորում են, բայց չեն կարողանում պատմել կամ մոռանում են: Այս հանգամանքը կա բոլոր պատմողական առարկաների դասաժամերին:

Հետևաբար, մենք՝ ուսուցիչներս, պետք է ունենանք համապատասխան մեթոդներ՝ օգնելու, աջակցելու, ուղղորդելու սովորողներին: Պետք է դասապրոցեսը կազմակերպել այնպես, որ նրանք կարողանան ինքնուրույն սովորել դասը, անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը, միմյանց հետ փոխանակեն կարծիքներ:

Եթե ուզում ես սովորածդ հիշել՝ ,Պատմի՛ր ուրիշին, հաճախ ենք լսել և ինքներս խորհուրդ տվել: Պարզ է , որ սովորողները պետք է սովորած դասը պատմեն մի քանի անգամ, որպեսզի հիշեն: Ինչպես նշել է հռոմեական պետական գործիչ, փիլիսոփա Սենեկա Կրտսերը ՝ ,Սովորեցնելով ուրիշներին սովորում ենք մենք ինքներս: Այդ հնարավորությունը, իմ կարծիքով, նրանց տալիս են , <<Խճանկար>> և , <<Շրջագայություն պատկերասրահում>> համագործակցային ուսուցման մեթոդներ են: Այս մեթոդների միջոցով աշակետները սովորում են, սովորելով սովորեցնում ընկերներին:

,Խճանկար մեթոդի բոլոր փուլերի ժամանակ, և՛ նյութի ուսումնասիրության, և՛ փորձագիտական խմբում և՛ ուսումնական խմբում աշխատելու ժամանակ, և թե ամփոփման ընթացքում աշակերտները բազմիցս կրկնում են նյութը և ըստ ինձ այլևս չեն մոռանա:

<<Շրջագայություն պատկերասրահում>> և <<Խճանկար>> մեթոդները համագործակցային մեթոդների տարատեսակներ են, որոնց նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Եվ բնականաբար, միմյանց լսելու, նյութը մի քանի անգամ բարձրաձայն կրկնելու, սովորածը արձանագրելու արդյունքում տեղի է ունենում սովորողների ուսումնառություն: Այստեղ նաև սովորողներին տրվում է լիակատար ազատություն, թե ինչպես սովորել, ինչպես միմյանց բացատրել և ինչպես սովորածը ներկայացնել: Իսկ ինչպես նշել է աշխարհը փոխած ուսուցիչ, Հարվարդի համալսարանի դասախոս՝ Պաուլ Ֆրեյրեն.

«Կրթությունն ազատություն է»:

Դե ուրեմն տանք սովորողներին այդ ազատությունը: Իմ նպատակն է ստուգել «Խճանկար» մեթոդի ազդեցությունը սովորողների ուսումնառության բարձրացման

վրա։

2. Գրականության ակնարկ

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝ (Johnson, D. W.,

Johnson, R. T., & Holubec, E. (2008) “Cooperation in the classroom" (8th ed.). Edina, MN:

Interaction Book Company)

1. Դրական փոխկախվածություն.

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ։

Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն։ Այն

նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը։

Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների Փոխհարաբերություններին

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.

Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ,

կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում

են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին

հասնելու համար։

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։

4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը։

5. Խմբային գործընթաց.

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների,

համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։

Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի

անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Խճանկար (Ջիգսո, Jigsaw)։

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է։ Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից։

Խճանկարի փուլերն են.

• նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,

• աշխատանք փորձագիտական խմբում,

• աշխատանք ուսումնական խմբում,

• ավարտական աշխատանք,

• ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում։

Սա ,Խճանկարե մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

,Խճանկար (Ջիգսո) –անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները

համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին

ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:

Ըստ Սերոբ Խաչատրյանի ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի

մետաիմացությունը, այսինքն այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից։ Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը։ Իսկ իր իմացածի և չիմացածի մասին սովորողները տեղեկանում են ավելի շատ համագործակցային ուսուցման ընթացքում, երբ փորձում են միմյանց բացատրել, լրացնել կամ ամփոփել։ Ըստ Սերոբ Խաչատրյանի ,Ոչ ոք ոչ ոքի չի կրթում, ոչ էլ մենք ենք մեզ դաստիարակում, մենք միմյանց կրթում ենք հաղորդակցության մեջ ՝ այս աշխարհում ապրելու համատեքստումե:

Պաուլո Ֆրեյրը համոզված էր, որ սովորելը չի փոխանցվում մի մարդուց մյուսը:

Փոխարենը, դա կառուցելու գործընթաց է մարդկանց միջև: Հետևաբար, ուսման գործընթացում ամենակարևորը ուսանողների մասնակցությունն է: Նա հավատում էր, որ աշխարհը կարիք չունի գաղափարներ կրկնող մարդկանց. աշխարհը կարիք ունի ստեղծողների, որոնք ստեղծում են նոր հնարավորություններ:

Նրա տեսանկյունից, կրթության ամենակարևոր մասը ստեղծագործական խրախուսումն է և դեպի անհատական և կոլեկտիվ ազատություն տանող ճանապարհի մաքրումը:

Գիտելիքը վակուումում չի ծնվում: Դա դուրս է գալիս հատուկ պայմաններից, ինչը նշանակում է, որ այն երբեք չեզոք է: Ես նույնպես համակարծիք եմ այս բոլոր մանկավարժներին. որպեսզի սովորողների մոտ վակուում չառաջանա, տանք նրանց ազատություն ինքնուրույն ձևավորելու, մշակելու և ներկայացնելու գիտելիքը:

3. Գործնական համատեքստ

Առաջին հայացքից թվում է, որ գիտելքը, ուսումը չի հետաքրքրում մի շարք աշակերտների: Նրանք միայն հետաքրքրված են երկու կամ երեք առարկայով

այնքանով, որքանով այն հարկավոր է ընդունելիության շեմը հաղթահարելու համար:

Բայց նկատել եմ, որ եթե նրանց տալիս ես ազատություն, եթե նրանց հետաքրքրում ես կատարել մի բան, որտեղ իրենք են որոշելու ինչ և ինչպես անել, երբ իրենք են դառնում պատասխանատու իրենց ուսման համար, ապա ոգևորվում են, փորձում են

առանձնահատուկ և հետաքրքիր մի բան անել: 11 –րդ դասարանում անցնում էինք ,Արդյունաբերության տեղաբաշխման գործոնները թեման, որը

բավականին հետաքրքիր թեմա է և թվում էր, որ աշակերտներին ևս շատ հետաքրքրեց ու լավ են յուրացրել: Թեման ավարտելուց հետո թեստային աշխատանքի արդյունքներից համոզվեցի, որ դա այդքան էլ այդպես չէր: Թեստի արդյունքները այսպիսին էին՝ առաջադիմությունը կազմեց 95 % , իսկ որակը՝ 21 %:

Թեման ուսումնասիրելիս կիրառել էի տարբեր մեթոդներ, օգտագործել էի զանազան

դիտակտիկ նյութեր, բայց չնայած իմ ջանքերին, արդյունքը գոհացուցիչ չէր:

Հաջորդ թեման՝ , Արդյունաբերության ճյուղերը: Վառելիքաէներգետիկ

արդյունաբերություն թեման էր: Որոշեցի հետազոտություն անցկացնել, փորձարկել, թե արդյո՞ք կստանամ այլ արդյունք, ներկայացրեցի ,<<Խճանկար>> մեթոդը,

երկու դասապրոցես կազմակերպելուց հետո արդյույունքը լիովին կփոխվեց:

Հետազոտական դաս 1

Առաջին դասի ժամանակ սովորողներին բաժանեցի 5 ուսումնական համասեռ խմբերի, որոնք հաշվելով 1-ից մինչև 5-ը՝ ընտրեցին իրենց համապատասխան համարը։ Նրանց բացատրվեց աշխատանքի նպատակը, իսկ գնահատման չափանիշները որոշեցինք սովորողների հետ միասին։ Դասի նյութը բաժանվեց հինգ մասի՝

1. Վառելիքային արդյունաբերություն

2. Նավթարդյունաբերություն

3. Գազարդյունաբերություն

4. Ածխարդյունաբերություն

5. Էլեկտրաէներգետիկա

Հինգ խմբերից յուրաքանչյուր նույն համարն ունեցողները (1-ին համարները 1-ին խմբում, 2-րդ համարները՝ 2-րդ և այլն) կազմեցին փորձագիտական խմբեր։

Յուրաքանչյուր խումբ իրենց ցանկությամբ ընտրեց վառելիքաէներգետիկ արդյունաբերության բաժինը և կատարեն ուսումնասիրություն,այնուհետև վերադարնալով մայր խմբերը և իրենց սովորած հատվածը սովորեցնելու էին մյուս անդամներին։

Գնահատման չափանիշներն արտահայտվելու էին հետևյալ հարցերի պատասխաներով։

1. Ո՞րն է վառելիքաէներգետիկ արդյունաբերության դերը տնտեսության զարգացման և տեղաբաշխման գործում։ Նշեք նրա ենթաճյուղերը։

2. Ի՞նչն է վառելիքաէներգետիկ հաշվեկշիռը։ Ի՞նչ կառուցվածքային փոփոխություններ է այն կրել XX դարի ընթացքում։ Նշեք վառելիքաէներգետիկ հաշվեկշռի տարածքային տարբերություններն ու դրանց պատճառները։

3. Վերլուծեք և քարտեզի վրա ցույց տվեք նավթի, գազի և ածխի արդյունահանման ու

սպառման գլխավոր տարածաշրջաններն ու երկրները։

4. Որո՞նք են էլեկտրաէներգետիկայի արագ զարգացման պատճառները։ Նշեք էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրները։

5. Որո՞նք են տարբեր տիպի էլեկտրակայանների (ՋԷԿ, ՋՐԷԿ, ԱԷԿ) զարգացման և տեղաբաշխման առանձնահատկությունները։

6. Էլեկտրաէներգետիկայի ո՞ր ճյուղն եք համարում հատկապես հեռանկարային և ինչու՞։

Երբ սովորողները իմացան իրենց անելիքը, սկսեցին աշխատանքը։

• Առաջին փուլում՝ նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում, փորձագիտական խմբով ուսումնասիրեցին նյութի, իրենց ընտրած մասը, կատարեցին գրառումներ, քննարկեցին միմյանց հետ, օգնեցին միմյանց հասկանալու առանձնահատկությունները, հստակեցրեցին։ Ես միայն ուղղորդողի դերում էի, կամ պարզաբանում էի խմբերում առաջացող թյուրըմբռնումներն ու անհասկանալի հարցերը։ Վերջում քննարկվեց այն հարցը, թե արդյո՞ք իմացան չափանիշներն արտահայտող հարցադրումների պատասխանները, կարողանու՞մ են արժևորել կամ գնահատել վառելիքաէներգետիկ արդյունաբերության կամ նրա այն ճյուղի դերը, որը տվյալ խումբն է ուսումնասիրում։ Երբ փորձագիտական խումբն ավարտեց աշխատանքն, յուրաքանչյուրը վերադարձավ ուսումնական խմբեր։

• Երկրորդ փուլում՝ աշխատանք փորձագիտական խմբում,

սկսած դասագրքի հերթականությամբ շարադրված մասերի՝ սկսեցին միմյանց բացատրել իրենց սովորածը, իհարկե, օգտվում էին նաև դասագրքից, անհասկանալի հարցեր էին ուղղորդում թե միմյանց, թե ինձ։

• Երրորդ ՝ ավարտական աշխատանք փուլում, իմի բերեցին իրենց սովորածը ,ձևավորեցին պաստառներ։

Ստացան ձևավորող գնահատում, և պաստառի ձևավորման, և խմբում ավելի լուռ աշխատելու, և աշխատանքը արագ ,արդյունավետ կազմակերպելու համար։

Այս փուլով ավարտվեց առաջին հետազոտական դասը։ Հանձնարարվեց տնային առաջադրանք։ Ուսումնական խմբով՝ համացանցից հետաքրքրվել և դուրս բերել, թե Հայաստանում վառելիքաէներգետիկ արդյունաբերություն ո՞ր ճյուղն է հատկապես զարգացած, որքանով։ Այսպիսով յուրաքանչյուր խումբ իրենց ցանկությամբ ընտրելով վառելիքաէներգետիկ արդյունաբերության բաժինը և կատարելով ուսումնասիրություն վերադարնալով մայր խմբերը իրենց սովորած հատվածը սովորեցրին մյուս անդամներին։

4.Եզրակացություն

Աշխատանքի արդյունքը բավականին մեծ էր,սակային կար նաև մեծ դժվարություններ, աշակերտները չէին պահպանում ժամանակի համաչափությունը և գրադարանային ձայնի առկայությունը:

ուսումնասիրելԱյս մեթոդը հնարավորություն է տալիս ուսումնասիրել

ակադեմիական հասկացություններ, սկզբունքների և իրադարձությունների

ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացում, աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք մշակում են գաղափարներ, կիսվում են դրանցով, մշակում և փոխանակում են տեղեկատվություն,կատարում են անդրադարձ, կատարում են ընտրություն ,կայացնում են որոշումներ, չեն վախենում հայտնել իրենց տեսակետը, չեն վախենում սխալվելուց, գնահատում և արժևորում են սովորածը, իրենց և մյուսների աշխատանքը:

Համագործակցային մեթոդի շնորհիվ զարգացնում են նաև լսելու, ինքնուրույն

աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու,

աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Եվ բնականաբար, միմյանց

լսելու, նյութը մի քանի անգամ բարձրաձայն կրկնելու, սովորածը արձանագրելու,

արդյունքում մտապահում և վերարտադրում են սովորածը:

Սակայն, որքան էլ այս 2 հետազոտական դասերի փաստարկներից ելնելով եզրահանգումներ կատարենք, որքանով էլ համագործակցային ուսուցման ազդեցությունը սովորողների առաջընթացի վրա իմ դասապրոցեսում արդյունավետ եղավ, այնուամենայնիվ, կարծում եմ, կախված տարբեր հանգամանքներից, թեմայի և միջավայրի առանձնահատկություններից, հնարավոր է արյունավետության տարբեր ցուցանիշներ ունենալ:

5. Գրականության ցանկ

1. Հետազոտության ուղեցույց

https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/Research_Skills_for_CSOs.pdf

2. «ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» Աղամյան Ն. Վ.

http://shsu.am/media/journal/2019n2b/53.pdf

3. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ
https://edumediadepot.gei.de/bitstream/handle/11163/2180/791501744_2013_A.pdf?sequence=2

4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՀՆԱՐՆԵՐԻ

ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԴԱՍԵՐԻՆ Սահակյան Վ. Ա.
https://hywikipedia.org/wiki/համագրրծակցային_ուսուցում 5. Աշխարհը փոխած ուսուցիչ Պաուլո Ֆրեյրը

https://hy.larafornm.com/paulo-freire-an-educator-who-changed-the-world-5661